

Դուրս գացած լրագրաց ճանրու
ծախքը խմբագրութեան վրայ է։
Լրագրաց վերաբերեալ նամակ
կամ որ եւ ինչ գրութիւն խմբագիր
— Տնօրէնին պիտի ուղղուի, Կ. Պե-
տք, Չինիլի խան, Մարտի գրասենե-
կակը։
Ճամբու ծախքը կ'աւարուած նս-
տակ չընդունուի։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆՍԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

տեղ կը մտաբերէր • մտաբերելը քիչ բան է • կ'սկսիք առ ժամանց դործելու աստու-
բէշը նետուել : Ասանց կ'աւելնէ չարութեան
ծը կ'աւելնէ • ամիսը դարձեալ կորցնէ և
մանդալին պէտք ունեցող ծիւղեր և ձիւ-
ղեր անխնայութի մէջ խառն 'ի խառն ան-
կարգ յօշոտուած • դրերու՝ մասնակիւնե-
րու՝ միջին խիւ երբեմն արմատներու ան-
բաւութիւնն մը մէկ վայրկեանի մէջ նախա-
տակուած և անոնց տեղ յաւիտեական
և անորոշելի ի մը բարձրագոյն թաղա-
ւորել սկսած : Այդպէս, ճշմարտութեամբ
ընդունաւ ինձ, ինչ քննա առած էին ձեզ
այն ողորմելիները՝ զորս անխնայ եւ ա-
ռանց հաշու կարեցիք, բնականօրէն, նե-
տեցիք : Թեքեալ ըսէք ինձ թէ մեր լեզուն
դժուարամտեղի և անհամարժեք կը յար-
գարեն հրովմանց այդ կերպաւորութիւն-
ները • բայց կ'աղաչեմ, սա միայն ըսէք
ինձ, որ լեզուն իր դժուարութիւնները
չունի : Այլ փաննամ թէ քանի մը որ վեր-
ջը մի՛ դուցէ՛ ելլաք ըսէք ինձ թէ • ինչ
հարկ կայ գլուխ, ծառ, երկիր ըսել զա-
նազան բաներու • ասոնք լեզուն անմատ-
գէշի կընեն • պէտք է վանել մեր բառա-
բարեին մէջէն այդ բառերը և հինգ կամ
սոսան իրերու մէջ անուն տալ • օրինա-
ւոր համար, դուրս ըսելու համար ծառ,
ծառ ըսելու համար ծառ, երկիր ըսելու
համար ծառ, ջուր ըսելու համար ծառ
ըսել, որով աւելի զերբուսանելի ըլլայ
մեր լեզուն :

Գուր ռեզիցը վերանորոգել մ'ըլ-
լալ մեր լեզուն • և արդարեւ իր այս վի-
ճակին մէջ, մեր դործածած լեզուն պէտք
ունի վերանորոգման : Բայց անգամ մը
պէտք էր ձեզ մտաբերել որ մէկէն աւելի
մարդիկ կ'ըսեն և պիտի կրնան խոստան
լեզու մը մօտեցնել, և այս ալ երեքէն ա-
ւելի տարինքու մէջ և երեքէն աւելի
թերթերու մէջ պարունակուած քերական-
նութեամբ մը :

Ձեր քերականութիւնը (եթէ երբէք
այս անունը կրնաիք տալ ձեր բարբարոս
ի ներքին) քննադատել չէ խորհուրդս •
բայց կը ջախճ որ այն մէկ քանի տարի-
ները՝ յորս աշխատած էք զայն դրելու,
մեր լեզուն կանոնադրութեան մէջ մու-
ծանելու համար խիստ քիչ արդիւնաւոր
տարիներ եղած են :

Գիտցէ՛ք որ ես չեմ կարող ո՛չ ձեր
դործերը դատարկելու, և ո՛չ մեր լեզ-
ւին համար պէտք եղած շինութեան վե-
րայ քար մ'աւելցնելու • սակայն կարա-
չեմ ձեզ հաւատալ որ մեր անխնայ և
անշարժ աշխարհագրաբան ձեռք մը
պէտք կը զգամ, ինչպէս որ այնքան ան-
կեղծութեամբ քիչ մ'աւելցնել խոստովանե-
ցայ • բայց ներեցէ՛ք ինձ որ ըսեմ ձեզի
թէ ձեր երկարացած աշխարհագրաբան դը-

րութիւնը շատ հեռի է կատարելոյ՝ հե-
տեւարար նաեւ դժուարեցնել ըլլալէ : Պատ-
ճառներուն մեծագոյն մասն ինքնին յայտ-
նի կերեկն մեր աչաց, և այս անգամ մը
նայածներուն վերայ չի պիտի խօսիմ ու-
րիշ ատեն, և եթէ փափագիք • փասն զի իմ
նպատակս տարբեր կ'ողմ մը կը շարժու-
նի մը խօսք ալ և վերջացնեմ :

Կանխակալ միտմանը չեն որ զիս և
ինձ նման շատերն ոչսպիւս խօսիլ կըտան
և պիտի տան, Պ. Չէրազ : Թէպէտ ես կը
հաւատամ որ գուր յաջողութեան կէս
յուսով ձեռնարկեցիք, փասն զի ինչ հարկ
կայ լսել և չի դուրս ելնել ամեն բան • ձեր
զրկին մէջ կը զգայի յողորմութեան և իւրա-
քանչիւր վայրկեան եղանակը փոխող ար-
տաբերութիւնները : Այլ տեսնելի զձեզ
մերթ հրապարակ ռուս մը որ ամեն բան
հրդեհել և յեղադրել կ'սպառնայ, մերթ
զերբարեկ եղէ՞ք որ ամենաթեթեւ մը որուն
առջև կը ծնուի • մերթ արծիւ մը՝ որուն
թռիչքը շանթերը կարհամարհէ, և մերթ
պալանի մը որ ամօթեմք զլուսը թեւին
տակ կը սքողէ : Եւ այդ բոլոր բանապո-
սիկ կերպարանափոխութիւնները՝ միմի-
այն յաջողելու համար : Ինչ կրնայիք ը-
նել, անմիջական պէտքը ամեն լուս միջո-
ջացի զիսկ կըտայ : Սակայն պէտք չէր
որ հարցնալիք • աւելի փափաքելի էր որ
ամեն ուրիշ կարգադրի վերայ թափելը
ձեր մտածութեան զինուորիւնը, քան
թէ տարածած վերանորոգութեան մը
անհամար շարժող ներքիւն : Այն ատեն
որքան աւելի գոհ պիտի ընէիք ձեր բո-
լոր բարեկամները, խրատներ չէ որ կը
տամ ձեզ, այլ կարծիքներ • մէկդի թա-
ղէ՛ք վայրկեանն մը այդ լեզուով թրջած
զրկել որ ամեն հին բանն բարի կամ չար
պատուել կը սիրէ, և ընդհանրութեան
համար նուազ անհպելի լեզուով զրեցէ՛ք
ինչ որ ձեր հանձնար, իր ընդարայս մըդ-
մանը անտարբ, ձեզի կ'առաջարկէ : Գի-
տեմ ինչ կը խորհի ձեր սիրտը բայց մի՛
հոգաք • ինչ լեզուի մէջ որ դրած ըլ-
լան, մեծ դործերը զոհ չի պիտի երթան
մուտքովի • ժամանակը և յետինք պի-
տի նախադրուեն և ապագային զա-
նանք : Խոհեմութիւն և համարեութիւն
ի՞նչ ընենք • չէր որ խորհրդածութեան
առաջ կամը կերթայ, կամընէ ետքն ալ
զգուշացնէ կըտայ • ըսել է հինքին մէջ
զոր չեմ ճանչնար, ես ալ պիտի ըսեմ • Ե-
թէ գործ մը ժամանակէն առաջ կը վա-
ղէ, անյաջողութիւնն ալ գործին գէ՛մ
կը վաղէ : Մնաք բարեաւ առ այժմ :

Յ. ՍԵԹԵԱՆ

• • • ԷՖԷՆՈՐ
Քաջայայտ ըլլալով, տէր, որ ձեր մե-

ծաղաղութիւնը կը բարեհաճի պատ-
ւել ու խորխորեղ Սամաթիոյ Սանուց ըն-
կերութիւնը, համարձակութիւն կ'ստա-
նամք նախակա կից հրաւերը ձեզ գրկելով
խնդրել, որ շնորհ ընէք ձեր ազգայնա-
լուսնեցի թանկագին էջերուն մէջ ըն-
դունելու, որոյ համար մեր կանխանակ
շնորհակալքեն մատուցանելով :

Կաղաչեմ ընդունելի խորին մեծա-
րանայս հաւատովքը, որով մնամ
1874 յունիս 7 Խորին յարգանք
Սամաթիա Կ. Յ. ԲԵԷԷԿԵԳԵԷԷԷ
Ատենապետ Սահ. Սանուց Թանդ.
Ընկերութեան Սամաթիոյ

ԵՐԿՐՈՐԴ ԶՐԱՆԻՐ

Սահ. Սանուց ընկերութեան առաջին
հրաւերը Մանուկ մէկ և Օրագրոյ 1233
թիւ թերթին մէջ հրատարակուեցաւ, ու
րով հրաւիրուած էին զխաւարար բու-
լոր Սահակեան սաները և նաև ուսումնա-
սէր աղջկանք՝ անդամակցել ընկերու-
թեան մի՛ որոյ գոյութիւնն ու յարատեւ-
ութիւնը մասնաւորաբար Սամաթիոյ երի-
տասարդութեան պատիւն է, և որոյ նը-
պատակն է՝ ձեռնարկել Սահակեան վե-
րահատուեալ թանկարանք և հրատա-
րակել զԲուրաստան Պօսոյ անդամակ-
ցելի թերթին մէկ և Սահ. Սանուց զրախան
ու աղջկան իտաքը :

Սոյն երկու աղբիւր նպատակներն ար-
դիւնաւորելու և նոցա ըստ բաւականին
զարգացման համար, իրեն միջոց, 40
փարսի շաքարեղէն բաժին մը կ'առա-
ջարկէ Սանուց ընկերութիւնը, միայն ան-
գամայն ազատ կամընէ թաղով 4 բաժնէն
աւելի ևս ստորագրուիլը :

Սոյն երկու նպատակներն քաջաբե-
լու և յարգելիս անկող համար՝ ուղարկեմ
խնդրուած և աղաչուած 40—20 և միւ-
շն և իսկ 40 փարսի պիտի զլանայ Սահակ-
եան յարկին ներքեւ սնած, ուսած և ոչ-
սոր իսկ այդ ուսման շնորհ վայելող սան
մի, 40 փարսի՝ որ կը խնդրուի յանուն
նոր սերնդեան, յանուն զարգացի և նոյն
իսկ յանուն Սամաթիացի երիտասարդու-
թեան :

Այժմ պատասխանելու համար մեր այս
հարցմանը՝ պէտք է զՍամաթիա մեռեալ
նկատել, պէտք է Սահակեանի մը սիրտը
ստաւ և զգացումը քար նկատել :

Մենք կ'ամաթիոյ վերայ փառահեղ
10 փարսի :
Ոչ, 1874ին, յանուն զարգացի և յա-
ռաւ խնդրուած և Սահակեան սաներէն
40 փարսի խնդրող եղաւ, և Սահակեան
ներ և Սամաթիացիներ զպայան զայդ չըն-
չին զրամբ—չպիտի ըսուի :
Եթէ օտար թաղերէ անդամներ չու-
նենայ Սանուց ընկերութիւնը՝ ասի մե-
զադրելի չէ • բայց Սահ. սաներու համար
բայց Սամաթիացոց համար, բնաւ այն-
պէս չէ :

Մեր այն աղբիւր հրատարակուեալ
պատճառը մեր նախորդ հրաւերն և նա-
և մասնաւոր հրաւիրաւորներն ըստ բա-
ւականին չարաւարտանուեցան ըսել չեմք
ուղեր, այլ անոնք՝ որ դեռ մեր մասնա-
ւոր հրաւիրանայ չեն պատասխանած, և
անոնք՝ որ անդամակցել կը վախճան ու
դեռ չեն անդամակցած, կրկին հրաւիրել
է նպատակին, որ անտարբեր չի մնա
մեր հրաւիրանացի զի Սամաթիա նիւթա-
կան ու բարդակաւ սաներէն վերջը կ'ստան
և արեւ կ'ուղէ :

Անդամակցութեան կամ որ և է առ-
թիւ թիւակցել ուղղող կը խնդրուի իւր
երկրորդն 'ի Սահ. վարժարանն ուղղել յա-
նուն ատենապետի :

Նաև ստորագրուիլ ուղղող կը խնդ-
րուի 'ի Սահ. վարժարանն զխնդ. եկեղեց-
այ աւարտման միջոցները կրկին օրեր :
1374 յունիս 7 Ի Դիմաց Սահ. Սանուց
Սամաթիա Թանդ. Ընկերութեան
Ատենապետ
Դ. Ս. ՄԷԷԷԷԷԷԷԷ Կ. Յ. ԲԵԷԷԷԷԷԷԷ

ԸՅՈՒ

Յառաջիկայ կիրակի, յունիս 9, Ա-
գապեան եւ փառնոսեան վարժարանայ
հանդէսը պիտի կատարուի 'ի Թա-
րապիա, Կայսերական պարտէզը :
Երբք թիւ յայրէջի շոգեանուն-
րէն 23 թիւ շոգեանուն ժամը 12 ին
Սամաթիայէն եւ Եփեսոսէն անց-
նելով կամուրջ պիտի գոյ, եւ ժամը
մէկին կամուրջէն ելլալով եւ Պէշիկ-
թաշ, Գուգուրեան, եւ Օրթաքէօյ
հանգիստելով ուղղակի Թարապիա
պիտի երթայ :

այոյ Պապ իւլ Ասրիալ (դուռն դրանց) քաղաքը շի-
նեց, այս անունը տալով անոր • որովհետեւ կով-
կասեան լեռանց մէջի ճանրուոն վրայ էր :

Շինած ամեն քաղաքներուն մէջ ազգ մը դը-
րաւ, որ Սիւսիճան (9) կը կոչուի : Արքանի երկրին
մէջ ալ Շեգգէնի (10) և Գամիկէրանի դռներն և
Տուտանի (11) դռները շինեց : Կը կարծուի որ
այս փոքրիկ Ժողովուրդը Տուտանի որդւոյն սեր-
եալ է : Ասոնցմէ զսա Տուրճուքի (12) քաղաքը
շինեց, որ 12 դուռն ունի, և ամեն դրան վրայ
քարէ դռնակ մը : Ճիւղմանի երկրին մէջ ալ Սուկ-
տէպիլ քաղաքը շինեց և Սաքիլմանայէն ու Փարս
գաւառէն եկած ցեղ մը բնակեցուց հոն, և այս
քաղաքը զինուորական քաղաք ըրաւ : Յունաց
երկրին կողմն ալ Ճիւղմանի գաւառին մէջ ամրոց
մը շինեց և անունը դրաւ Գուռն Գիւրուզ Գապա-

չոսեանուր : Այս քաղաքն ալ կոսովից ծովուն եզերքը
Շամաթիի և Գարբանտի մէջ տեղը շինուած էր :

(9) Մովսէս Խորենացի. Գիրք Ա. Գլ. 2. (Գեղամ)՝ ամս
(Սիւսիա) զմեծ մասն ընչից իւրոց տուեալ, և ծառայոյ
անձինս բազումս, սահման հատանէ՝ նախ ժառանգու-
թեան 'ի ծովէն ընդ արեւել, մինչև 'ի դաշտ մի, ուր գե-
տըն Երափս հատեալ քաղաքն ձառն լեռանց անցանէ ընդ
խոխոսն ձիւղս և ներս, աշտիւն դիւղման իջանէ 'ի դաշտ
մի : Աստ բնակէ Սիւսի, ըսու շինութեամբ գահաճան
իւրոյ բնակութեան, և զաշտարձն կոչէ իւրով անուամ-
բն Սիւսիք • այլ Պարսք յատկապէս եւս Սիւսիան կո-
չեն :

Սիւսիճան անունը Պլատոնի պատմութեան մէջ
յառաջ յիշուած ըլլալուն պատճառաւ, պարտք համա-
րեցանք այս ցեղին ծագումը յիշեցնել ընթերցողաց :

(10) Շեգգէն կամ ըստ այլ պատմաբանաց և աշխար-
հագրաց Շեգքի, Վրաստանի մէջ է Կուր գետին և Կով-
կաս լեռան մէջ տեղւոյ Թիֆլիզի արեւելեան կողմը : Իսկ
Քամիկէրան անունը չիլիցի բնաւ գտնել ուրիշ մատե-
նագրաց մէջ :

(11) Տուտանի՝ Վրացիոյն և Նայերէն Յօթ, Յօթէգ
կոչուած երկրին է Կուր գետին հիւսիսակողմը, որ
յետոյ Կոսովի կոչուեցաւ :

(12) Տուրճուք Վրաստանի մէջ :

տի • յետոյ ուրիշ ամրոց մը շինեց և Գուռն Լա-
տիկայի անունանց, երրորդ մ'ալ շինեց և Գուռն
Պարեգայի անունանց • այս վերջինը Տրապիզոնի
ծովուն վրայ է : Յետոյ Ալեքսանդր դուռն և Շամպա-
գի (13) դուռն, ճէրտամանի (14) և Սամուկէ (15)
ամրոցները շինեց :

Անուշիրվան՝ Յունաց ձեռքն եղած Հայաստա-
նի ամեն մասերուն տիրեց, Տէպիլ (16) քաղաքը
նորոգեց և ամրացուց • Պուսփուրաճանի (17) մէջ
ալ Նէշէվէ (18) քաղաքը շինեց, Վայսի (19) միջնա-
բերդն և բազմաթիւ ամրոցներ շինեց Սիւսիճանի
երկրին մէջ, օրինակի համար Քիլայա և Սահիւ-
նէշ բերդերը, և ասոնց ամենուն մէջ Սիւսիճի
քաջ և պատերազմախորժ մարդիկ բնակեցուց :

Ապա Անուշիրվան գիր գրեց Թուրքաց թա-
գաւորին, և խաղաղութիւն, հաշտութիւն ու
բարեկամութիւն խնդրեց, և այս գաղափարին
զայն մօտեցնելու համար իր գաւառացի մին անոր

- (15) Սամուկէ Վրաստանի մէջ :
- (14) Գարգաման Ուտի գաւառին մէջ : Մովսէս Խո-
րենացի իւր աշխարհագրութեան մէջ կըսէ թէ այս
այն գաւառներէն մին է զորս Արուսեք առին Հայոց
ձեռքէն : Գարգաման նախնաքը Կուր գետին հիւսիսա-
կողմը կիցնայ Թիֆլիզի հարաւային արեւելեան կողմը, և
հիստ կը կոչուի Գարգայի անապատ :
- (15) Շամուկէ, Վրաստանի երեք մայրաքաղաքաց
մին :
- (16) Գուռն քաղաքն Արաբիոյն անունն է : Մովսէս
Խորենացի և Փաւստոս Բիւզանդացի այս քաղաքին հիմ-
նադրութիւնը Հայոց Խոսրով թագաւորին կընծայեն :
- (17) Հայերէն Վասպուրական Յունաց պատմիչներն
Հայերէնին համաձայն կը դրեն այս քաղաքին անունը
իսկ մեր Արաբացի պատմիչին գործածած Պուսփուրաճ
ձան անունը Վանայ սեպուճն արձանագրութեանց մէջ
տեսնուած Պուսպուրուի անունին կը պատասխանէ : Այս
անունը կը նշանակէ երկիր մը, ուր հոտուէտ տունկեր
կը գտնուին (բայս և բուրական), որք անուշ հոտ կը
բուրեն :

- (18) Հայերէն Նոթիւսան :
- (19) Վայսոյ ձոր Սիւսեայ գաւառին մէջ :
- (20) Միւրասիս իւլ իթթիա կոչուած աշխարհագրական
բաւարանին նայեալ՝ Արքանի երկրին մէջ քաղաք մ'էր :

կնութեան տալ առաջարկեց խնամութեամբ կապ-
ւելու փափաք յայտնելով : Այս նպատակաւ իր
կանանց մէկէն որդեգրեալ աղջիկ մը զրկեց անոր
իրեւ իւր հարազատ դուստրը • Թուրքն ալ աղ-
ջիկն իւր տունն առաւ, և ինքն Անուշիրվանի քով
երթալով, Պէշիկէ (20) քաղաքը գտաւ զայն, և
և քանի մ'օրեր մէկուշ անցուցին իրարմէ դոհ
ըլլալով, և բարեկամութեան փոխադարձ խորձեր
տուին իրարու : Յետոյ Անուշիրվան հրաման ըրաւ
իր պահապան զօրաց դուռներէն մէկուն որ գիւ-
շերը Թուրքին բանակին կողմն երթան և կրակ
վառեն, անոնք ալ ըրին, Հետեալ օրը Թուրքե-
րը գանգատ ըրին Անուշիրվանի, բայց նա ուրա-
ցաւ այնպիսի հրաման մը տուած ըլլալը, և մինչև
իսկ իր մարդոցմէն մէկուն այնպիսի բան մ'ըրած
ըլլալը չգիտնալ կեղծեց : Բանի մ'օր ետքը հրա-
մայեց նոյն զօրագունդին որ կրկին նոյն դործու-
ղութիւնը • անոնք ալ ըրին, Թուրքերն իրար ան-
ցան և նորէն Անուշիրվանին երթալով գանգատե-
ցան : Բայց նա հանդարտեցուց զանոնք 'ի չըմեղու
հանելով զինքը, և դործը հետեւութիւն չունեցաւ :
Ետոյ Անուշիրվան իր բանակաւորին մօտ կրակ վա-
ռել տուաւ գիւշերն, այնպիսի անդ մը, ուր քանի մը
հիւզակներ միայն կային խոտերէ և արմաւենւոյ
ոտերէ շինուած : Երկրորդ օրը Անուշիրվան գան-
գատեցաւ Թուրքին ըսելով • « Գիշ մնաց որ քու
մարդիկ իմ բանակս պիտի կոխեն, մինչդեռ
դուռն ինձմէ կ'ապաւ ըրիր » : Թուրքն երբեմն ըրաւ
որ բնաւ տեղեկութիւն չունէր • Այն ժամանակ
Անուշիրվան ըսաւ անոր • « Եղբայր, իմ ու քու
զօրքերը չեն գիտեր իրարու երկիր արշաւել և ա-
ւարառութիւն ու թշնամութիւն ընել » : մեք ալ
միշտ կ'ապաւ մէջ պիտի մնանք թէ կրնան այն-
պիսի դէպքեր պատահիլ՝ որք մեր բարեկամու-
թիւնն ու հաշտութիւնը աւրեն, և մեր սէրն ու
նիղակակցութիւնը նորէն թշնամութեան փոխուի :

(20) Միւրասիս իւլ իթթիա կոչուած աշխարհագրական
բաւարանին նայեալ՝ Արքանի երկրին մէջ քաղաք մ'էր :

